

Մ-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԻԼՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ՎԻԿՏՈՐԻ

ԱԲԻԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ
1917-1921 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է. 00. 02 - «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2007

5-8 արքրո
 100 գեսոր ճիշտ
 ոչ հաճ է հայտն
 ազագույն Տան
 հեշինակից:

ՃԻ - Ն

Հանրապետության բնման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
 ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝
 պատմական գիտությունների
 դոկտոր Պ. Ա. Չոբանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
 պատմական գիտությունների
 դոկտոր, ՀՀ ԳԱԱ քրակից-անդամ

Ա. Ա. Մեքոնյան

պատմական գիտությունների

թեկնածու Ս. Մ. Սինապյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2007թ. փետրվարի 22-ին,
 ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի
 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում
 (հասցեն՝ 375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 24գ):

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
 ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2007թ. հունվարի 22-ին:

Մասնագիտական խորհրդի
 գիտական քարտուղար, պատմական
 գիտությունների թեկնածու



Ա. Ա. Շարսրյան

I. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 1917 թ. Ռուսաստանում առաջացած
 հեղափոխական ցնցումներն արմատապես փոխեցին քաղաքական իրադրությունն
 Այսրկովկասում: Երկրամասում տևական բնույթ ստացած անիշխանության մթնո-
 լորտը որպես հետևանք ունեցավ քառս մաս ազգամիջյան հարաբերություններում:
 Թվում էր, թե, այնուհետև, խորհրդային իշխանության տարիներին հետզհետև
 հաղթահարվել էին Ռուսաստանի կայսրության անկման հետևանքով Կովկասի
 տարածաշրջանում առաջացած աշխարհաքաղաքական բախումները և անմասնա-
 դեպ ճգնաժամն ազգամիջյան հարաբերությունների մեջ: Սակայն Խորհրդային
 Միության կազմալուծումն իր հերթին բացահայտեց, որ կոմունիստական ամբողջա-
 տիրությունն արմատապես չէր վերացրել ազգամիջյան հակասությունները, հաղոր-
 դելով նրանց քրոնիկական բնույթ: Թերևս, սխալված չենք լինի, եթե ասենք, որ ազ-
 գային հարցը դեռևս մնում է արմատական խնդիրներից մեկը Կովկասում:

Ազգամիջյան բարդ հարաբերությունների հետևանքով առաջացած հիմնա-
 հարցերի շարքում է դեռևս 1917-1921 թթ. ծագած Աբխազիայի կարգավիճակի
 խնդիրը և նրա հետ կապված վայրիվերումները: Հիշյալ ժամանակաշրջանում տեղի
 ունեցած իրադարձությունների հետազոտման գործում էական նշանակություն ունի
 Աբխազիայում քաղաքական իրադրության և վրաց-աբխազական հարաբերու-
 թյունների լայն պարզաբանումը: Հայտնի աբխազական պատմաբան Ս. Լակոբան
 գտնում է, որ «1917-1925 թթ. կազմում են արմատական շրջան XX դարի Աբխա-
 զիայի պատմության մեջ»¹, իսկ 1917-1921 թթ. ժամանակաշրջանը հիմնական
 ցավոտ կետերից է վրաց-աբխազական հարաբերությունների մեջ²: Ժամանակակից
 Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցը առաջացել է մեկ վրաց-աբխազական
 պատմականորեն չկարգավորված հարաբերությունների հետևանքով, ուստի ընտր-
 ված թեման ունի գործնական նշանակություն և արդիականություն: Հատկապես ար-
 դի պատմության շրջանում այն մեծ հնչեղություն է ձեռք բերել՝ կապված վրաց-
 աբխազական հակամարտության հետ:

ՀԵՏԱՁՆՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Աբխա-
 զիայի կարգավիճակի հիմնահարցի զարգացումը կարելի է բաժանել երեք հիմնա-
 կան ժամանակաշրջանների: Առաջինը՝ 1917-1921 թթ., երբ ձևավորվում էին
 Վրաստանի Հանրապետության սահմանները և Աբխազիան ընդգրկվել էր նրա կազ-
 մի մեջ ինքնավարությունից օգտվելու պայմանով: Երկրորդը՝ 1921 թ. մարտից մինչև
 1985 թ.: Այդ ընթացքում Աբխազիան ստացել էր ինքնավար հանրապետության կար-
 գավիճակ Խորհրդային Վրաստանի կազմում, սակայն դրա վերամայման հարցը
 ժամանակ առ ժամանակ առաջ էր քաշվում աբխազ հասարակայնության կողմից:
 Երրորդը՝ 1985 թ. մինչև մեր օրերը, այսինքն՝ «Վերակառուցման», ԽՍՀՄ-ի կազմա-
 լուծման, Վրաստանի անկախության հռչակման հետևանքով Աբխազիայի կարգա-
 վիճակի վերանայման փորձը և դրա արդյունքում վրաց-աբխազական զինված
 հակամարտության առաջացումը, որի հետևանքով Աբխազիան հայտնվել է առողջ
 կարգավիճակի մեջ: Ծավալված գործընթացները վերջին ժամանակահատվածում

¹Лакоба С. З., Абхазия после двух империй (XIX-XXI вв.). Очерки (Славяно-Евразийские исследования, Вып. 2), (Slavic Research Senter, Hokkaido University, Sapporo 2004). Москва, 2004, с. 39.
²Նույն տեղում, էջ 45:

դեռևս չեն ստացել իրենց տրամաբանական վախճանը՝ հետևապես պատմական շրջանը հնարավոր չէ համարել ավարտված:

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են Ռուսաստանի կայսրության անկման և Վրաստանի Հանրապետության խորհրդայնացման միջև ընկած շրջանը, քեպետ հետազոտության տրամաբանությամբ թելադրված ատենախոսության մեջ հիշատակված որոշ փաստերը և իրադարձությունները դուրս են գալիս ժամանակագրական շրջանակներից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Աշխատության հիմնական նպատակն է եղել հետազոտել վրաց-աբխազական, հայ-աբխազական, և մասամբ նաև հայ-վրացական հարաբերությունները 1917-1921 թթ., բացահայտել այդ փոխհարաբերությունների ձևավորման ընթացքը և գլխավոր միտումները: Ելնելով հիմնական այս նպատակից՝ մեր կողմից դրվել են հետազոտական հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել վրաց-աբխազական քաղաքական հարաբերությունների կայացման և զարգացման հիմնական միտումները 1917-1921 թթ.՝ առանձնակիորեն շեշտադրելով այդ հարաբերությունների վրա էապես ազդող ներվրացական զարգացումներն ու ներքաղաքական գործոնները:
- Բացահայտել Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցի առաջացման պատճառները, նրա զարգացման հիմնական միտումները և փուլերը:
- Ներկայացնել վրաց-աբխազական հարաբերություններն արտաքին քաղաքական գործոնների ազդեցության համատեքստում:
- Ներկայացնել Վրաստանի համշենահայ համայնքի կացությունը 1918-1921 թթ., լուսաբանել նրանցում առկա խնդիրները և բացահայտել Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցի հետևանքով ծագած խնդիրների և իրադարձությունների ազդեցությունը համշենահայ համայնքի կացության վրա:
- Ցույց տալ համշենահայ համայնքի հանդեպ Վրաստանի իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության հիմնական կողմերը: Բացահայտել համշենահայ համայնքի հարաբերությունները Վրաստանի հայության հետ և նրանց առջև ծառայած խնդիրների ընդհանրությունը:
- Ներկայացնել Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինների արտաքին քաղաքական գործունեության հիմնական ուղղություններն Աբխազիայում:

ՈՒՍՈՒՆՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Աբխազիայի կարգավիճակի հարցին առնչվող աշխատությունները աչքի են ընկնում հիմնականում միակողմանի մոտեցումներով, փաստերի և հանգամանքների ընտրովի հետազոտությամբ: Ուստի աշխատանքի գիտական նորույթն ամենից առաջ այն է, որ մեր խնդիրն ենք համարել տալ վրաց-աբխազական հարաբերությունների անկողմնակալ և անաչառ լուսաբանում: Աշխատության մեջ ներառված են քե՛ արխազ և քե՛ վրաց ուսումնասիրողների մեկնաբանությունները, այսինքն՝ ուսումնասիրվել են հակադիր դիրքորոշումները, իրար հակասող փաստարկներն ու մոտեցումները: Այս առումով շարադրանքի կառուցվածքը ինքնին նորույթ է ներկայացնում: Աբխազիայի տարածքում հայ-վրացական, հայ-աբխազական և հայ-ռուսական ազգամիջյան

հարաբերությունների խնդիրները խորհրդային ժամանակաշրջանում դժվար էր ուսումնասիրել և մեկնաբանել՝ գիտական հասարակության կողմից: Այժմ պայմանները փոխվել են, սակայն ժամանակակից հետազոտողներն առայժմ ձեռնամուխ չեն եղել անդրադառնալ հիշյալ հարցերին: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նաև նրանում, որ Աբխազիայում 1918-1921 թթ. հայ համայնքի կացությունը քննող, համապարփակ, հավաքական և ժամանակագրական սկզբունքների վրա հիմնված աշխատություններ դեռևս չկան: Աբխազների և հայերի օրինակով նորովի է լուսաբանվում ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած Վրաստանի կառավարության քաղաքականությունը: Աշխատանքը արդի պատմագրության մեջ առաջինն է անդրադառնում Վրաստանում ու նաև Աբխազիայում հայերի մշակութային ինքնավարության հիմնահարցին:

Նշված պահանջները բավարարելու նպատակով աշխատությունում գիտական շրջանառության մեջ են դրվում դեռևս չլուսաբանված արխիվային նոր նյութեր: Հետազոտվել են 1917-1920 թթ. Վրաստանում լույս ընծայված պարբերական մամուլի էջերում տպագրված բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք, ըստ էության, ունեն սկզբնաղբյուրի նշանակություն: Մասնավորապես վերահայ մամուլում տեղ գտած վիթխարի քանակությամբ լրատվական նյութերի ուսումնասիրությունը մեծապես նպաստում է ինչպես ողջ թեմայի, այդպես էլ նրա առանձին կողմերի նորովի ուսումնասիրությանը և նոր եզրահանգումներին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է հիմնահարցի օբյեկտիվ հետազոտման սկզբունքը: Աշխատությունը գրելիս առաջնորդվել ենք պատմական ժամանակահատվածում երևույթների, միտումների, գործընթացների և իրադարձությունների համադրման մեթոդով: Համեմատվել են տարբեր հարցերի շուրջ եղած զանազան, հաճախ իրարամերժ ու հակասական մոտեցումներ և դրանց հիման վրա կատարվել նոր եզրահանգումներ ու մեկնաբանություններ: Կատարված են նաև վիճակագրական տվյալների վերլուծություններ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՆՆԱՄԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՄՏԻՃԱՆԸ: Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցին անդրադարձող աշխատությունները հաճախ կրում են միակողմանի, միտումնավոր և հակասական բնույթ, որոնք դժվարություններ են ստեղծում հիմնահարցի ընկալման համար: 1917-1921 թթ. վրաց-աբխազական հարաբերությունների ոլորտում ծագած խնդիրները մասամբ ուսումնասիրվել և լուսաբանվել են առանձին հետազոտողների կողմից: Նրանք շրջանառության մեջ են դրել նաև մեծաքանակ փաստաթղթեր և նյութեր: Վերլուծություններ պարունակող հետազոտությունների մեծ մասը լինելով կենտրոնացված որոշակի հարցերի քննման վրա, անկողմնակալ չէ՝ արտահայտելով կամ վրաց, կամ էլ արխազ պատմաբանների հակադիր տեսակետները: Նրանց հետազոտություններում նյութի շարադրումը հաճախ կատարվում է զուտ բանավիճակում նպատակով, և ակնառու է, որ որոշ դեպքերում բանավիճակում խնդիրները գերակայում են գիտական պահանջների վրա³:

Հետազոտողներից շատերը անտեսում են Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցի ծագումը, որպես Ռուսաստանի կայսրության կազմալուծման հե-

³Յե՛ս Լորդկիանիձե Մ., Абхазия и Абхазы (на груз., русск., и англ. яз.). Тб., 1990. Նաև՝ Марыхуба И., Об Абхази и Абхазии (историческая справка). Второе, дополненное издание (на русск. и англ. яз.). Сухум (Майкоп, изд. "Адыгея"), 1993.

տևանք: Վրաց պատմաբաններն անմիջական կապի մեջ են դիտարկում նոր և հին վրացական պետականությունը, քանզի վերջինիս իրավասությանը ժամանակին պատկանում էր Աբխազիայի տարածքը, և դրանով իսկ հիմնավորում նրա կապի անհրաժեշտությունը նորակազմ Վրաստանի Հանրապետության հետ:

Ռուսաստանի կայսրության փլուզումից հետո Վրացական նոր պետականության կազմում Աբխազիայի հայտնվելու գործում որոշյն դեր էին ունեցել մի շարք պայմանագրեր, որոնք 1918 թ. կնքվել էին արխազ ժողովրդի ներկայացուցիչների և վրացական կողմի միջև: Պայմանագրերի նկատմամբ գոյություն ունեն հակասական տեսակետներ, որևէ հետազոտություն լրջորեն չի անդրադարձել այդ փաստաթղթերի կնքման դրդապատճառների և բովանդակության խորը վերլուծության: Ս. Լակոբան այս խնդրում ստեղծված կացությունը խճճված է համարում և նկատում է, որ նույնիսկ վրաց հետազոտողների մի մասը հղում է 1918 թ. հունիսի 8-ի դաշնագրի, իսկ մյուսը՝ նույն օրվա հունիսի 11-ի⁴: Վրաց պատմաբան Լ. Բարթաձեն կարծում է, որ «[1918թ.] հունիսի 11-ի դաշնագիրը հանդիսանում է վիճելի արխազ և վրաց պատմաբանների համար, ինչը պահանջում է հետազոտում»⁵, ինչպես նաև «... երկու [դաշնագրերի] որոշակի տարբերվող տեքստերի գոյության փաստը պիտի լինի հետագա հետազոտությունների առարկա»⁶: Այդ դաշնագրերը խոստանում էին տրամադրել Աբխազիային ներքին ինքնուրույնություն, որի չափն ու ծավալը պահանջում էր լրացուցիչ պարզաբանում: Այս առթիվ ևս արդի վրաց և արխազ պատմաբանները հանգում են հակադիր տեսակետների: Կողմերից մեկը համոզված է, որ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կազմում Աբխազիան օգտվում էր ինքնավարության իրավունքից: Մյուսը՝ քացարձակապետ համաձայն չէ նրա հետ: Մինչև անգամ միևնույն վրաց պատմաբանը հայտնում է երկու չզուգահեռվող տեսակետ այս խնդրի վերաբերյալ: Այսպես, Ա. Մենթեշաշվիլին սկզբից ճանաչում էր, որ 1918 թ. հունիսի 8-ի դաշնագիրը խոստանում էր «տրամադրել ինքնավարություն Աբխազիային, թեև դրա գործնական իրականացումը հետաձգվել էր»⁷, «թվում էր, թե դրանից հետո չկար որևէ խոչընդոտ Աբխազիայի ինքնավարության իրավական կարգավորման համար: Այնուամենայնիվ դա տեղի չունեցավ»⁸: Հետագայում նա արդեն պնդում է. «Հունիսի 8-ի դաշնագրով Աբխազիային տրամադրվել էր լայն ինքնավարություն»⁹: Ներկա աշխատությանում մենք փորձել ենք պարզաբանել ու հստակեցնել նաև հիշյալ հարցը և նրա շուրջ ծագած խնդիրները: Տարբեր գնահատականներ տվող կողմերը գերադասում են վկայակոչել այն նյութերն ու փաստաթղթերը, որոնք հաստատում են իրենց տեսակետների իսկությունը, սակայն երբեմն անտեսում են կարևոր նշանակություն ունեցող այլ

⁴Лакоба С. З. Абхазия после двух империй..., с.54.

⁵Бакрадзе Л., Абхазия 1918 года в документах германского МИДа.-“Аспекты грузино-абхазского конфликта 5”. Материалы грузино-абхазской конференции: преемственность культур в контексте государственного строительства, Адлер 26-28 августа 2000г. University of California, Irvine 2001, с. 339.

⁶Նույն տեղում, էջ 341.

⁷Ментешашвили А., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии 1917-1921 гг. Тбилиси, 1987, с. 117-118. Ментешашвили А., Сургуладзе А., Только факты и документы.-“Литературная Грузия”, 1989, N 11, с. 151.

⁸Ментешашвили А., Октябрьская революция..., с. 119.

⁹Ментешашвили А., Грузино-абхазские отношения в первой четверти XX века.-“Разыскания по истории Абхазии/Грузии”. Тбилиси, 1999, с. 266:

աղբյուրների առկայությունը: Միաժամանակ հնարավոր չէ չիսմաձայնել Ս. Լակոբայի հետ, որն անտակտ է համարում այն կշտամբանքները, թե արխազ գիտնականների աշխատությունները տառապում են ոչ պատշաճ վավերագրական հիմնավորմամբ, քանի որ 1992 թ. վրաց-արխազական զինված հակամարտության հետևանքով ոչնչացվել էին Աբխազական Պետական Կենտրոնական Աբխիվը, ինչպես նաև Աբխազական Մարզկոմի և Դ. Ի. Գուլիայի անվ. Լեզվի, գրականության և պատմության Աբխազական գիտահետազոտական ինստիտուտի արխիվները¹⁰: Այդ անվերադարձ վնասի մասին հայտնում են նաև այլ հեղինակներ¹¹: 2003թ. Մոսկվայում կայացած վրաց և արխազ պատմաբանների հանդիպման ժամանակ բարձրացվել էին մի շարք խնդիրներ, որոնցից էր նաև Թբիլիսի պատմական արխիվներից արխազ գիտնականների օգտվելու պահանջը, քանզի Մուխոմի արխիվների ոչնչացման հետևանքով յուրջ դժվարություն է առաջացել հետագա-գիտահետազոտական աշխատանքների համար¹²:

Վրաց և արխազ պատմաբանների ուշադրությունն ամբողջովին սևեռվում է փոխադարձ հարաբերությունների վրա, միանգամայն անտեսվում է Աբխազիայում բնակվող այլ ժողովուրդների դերը և նշանակությունը, նրանց ունեցած ազդեցությունը դեպքերի զարգացման վրա: Հեղինակներից շեղում են անդրադառնում ուսումնասիրվող հիմնահարցի խորքային կողմերին, իսկ մի մասը հակված է վրաց-արխազական հարաբերությունները ներկայացնել միայն բացասական հետևանքների տեսակետից: Հետազոտվող ժամանակաշրջանում Աբխազիայի կարգավիճակի խնդիրը դարձել էր միջազգային հարաբերությունների առարկա: Այդպես, վրաց և արխազ պատմաբանները տարբեր գնահատական են տալիս Օսմանյան Թուրքիայի գործունի և Աբխազիայի նկատմամբ նրա երիտթուրքական կառավարիչների ուղեգրություններին: Աբխազ հեղինակները հակված են լիովին անտեսել 1918 թ. թուրքական վտանգն Աբխազիայի ժողովուրդների համար և փորձում են գտնել Թուրքիայի նվաճողական քաղաքականության մեջ դրական միտումներ արխազ ժողովրդի պատմության տեսակետից¹³:

1917-1921 թթ. Աբխազիայում և նրան հարակից տարածաշրջանում քաղաքական իրադրության, երկրամասի կարգավիճակի հիմնահարցի, ինչպես նաև այդ համատեքստում Վրաստանի կառավարության վարած քաղաքականության վերաբերյալ որոշակի հետազոտական աշխատանքներ կատարած հեղինակները մշակել են երկու հիմնական հայեցակարգ՝ «վրացական» և «արխազական»: Մակայն արդեն նկատված է, որ երկուսն էլ տառապում են հիմնական թերությամբ, որն արտահայտվում է փաստերի հատուկ ընտրության մեջ, ինչն արդյունքում հանգեցնում է իրարամերժ եզրահանգումների: Ըստ վրաց հետազոտող Ջ. Շատիրիշվիլու, «չկա միասնական արխազական պատմություն: Առկա է հատկապես արխազական տե-

¹⁰Лакоба С. З. Абхазия после двух империй..., с.45. Նաև՝ История Абхазии, под. ред. Лакоба С. З. Гудаута, 1993, с. 406-407.

¹¹Крылов А. Б., Постсоветская Абхазия. Москва, 1999, с. 251. Шнирельман В. А., Война памяти: мифы, идентичность и политика в Закавказье. Москва, 2003, с. 413. Колбая Г., Грузино-абхазское противостояние. - “Азия и Африка сегодня”, 1995, N 3, с. 24.

¹²Аспекты грузино-абхазского конфликта 10. Время перемен. University of California, Irvine 2005, с. 280-281:

¹³История Абхазии, под. ред. Лакоба С. З. Гудаута, 1993, с. 299-300.

սակետից գրված արխիվային պատմություն: Եվ կա վրացական տեսակետների վրա հիմնված Աբխազիայի «վրացական» պատմություն»¹⁴:

Խորհրդային ժամանակաշրջանում վրաց պատմաբանների ուշադրությունից դուրս էր մնացել XX դարում Աբխազիայի իրավական կարգավիճակի շուրջ ծագած խնդիրների ուսումնասիրությունը: Միայն «Վերակառուցման» շրջանում, հայտնի իրադարձությունների հետևանքով, վրաց պատմաբաններ Ա. Մենքեշաշվիլին և Ա. Մուրզուլաձեն փորձ կատարեցին գիտականորեն վերլուծել այդ հարցերի մի մասը¹⁵: Հետագայում իր աշխատություններում Ա. Մենքեշաշվիլին գիտական շրջանառության մեջ նոր նյութեր էր դրել, որոնք խորհրդային ժամանակաշրջանում անհայտ էին մնում լայն հասարակության համար¹⁶: 1917-1921 թթ. Աբխազիայում իրադարձությունների հետազոտման գործում նրա կողմից մշակված սկզբունքները և մոտեցումները դարձել են «վրացական» հայեցակարգի հիմնաքարը: Դրա մասին է վկայում Ա. Մենքեշաշվիլու գիտական հոդվածի ընդգրկումը Վրաստանում լույս ընծայված և Աբխազիայի ընդհանուր պատմության վիճելի խնդիրներին նվիրված վերջին նշանակալի ժողովածուի մեջ¹⁷: Քանի որ ուսումնասիրությունը միայն նախնական հրատարակվածի կրկնությունն է, հետևապես դա կարելի է ընկալել որպես «վրացական» հայեցակարգի ամբողջականացում: 1917-1921 թթ. վրաց-աբխազական հարաբերություններին նվիրված Ա. Մենքեշաշվիլիի աշխատություններն աննշան չափով տարբերվում են միմյանցից ինչպես հետազոտվող նյութով, այդպես էլ վերլուծություններով, թեև վերջին հետազոտություններում հեղինակի մոտեցումները խնդրի նկատմամբ զգալիորեն քաղաքականացվել են¹⁸:

Պատմաբաններ Ջ. Գամախարիայի և Բ. Գոգիայի հետազոտության մեջ ընդգրկված են զգալի ծավալով նյութեր և փաստաթղթեր, որի շնորհիվ հեղինակները հավակնում են Աբխազիայի պատմության ամբողջականացման նպատակին¹⁹: Դրանց մի մասը վերաբերվում է 1917-1921 թթ. ժամանակահատվածին: Հեղինակներն այդ նյութերի հիման վրա վրաց-աբխազական քաղաքական հարաբերությունների հիմնահարցի բուն էության շուրջ կատարել են մեկնաբանություններ, սակայն ոչ բոլոր դեպքերում հաջող: Հետազոտությունում տեղ գտած փաստաթղթերի մի մասը գրքի հեղինակների կողմից հրապարակվել է կրճատ տեսքով: Առանձին դեպքերում նյութերի բովանդակությունը կամ չի հաստատում, կամ էլ ուղղակի հակասում է հեղինակների եզրահանգումներին: Ուստի հրապարակած նյութերը չեն արժանացել հետազոտողների կողմից խորն ուսումնասիրության, քանի որ դրանց վերլուծությունն ունեցել է զգալիորեն մակերեսային բնույթ: Ռուսաստանյան գիտնական Վ. Շնիրելմանի մեկնաբանության մեջ բացասական գնահատական է տրվում պատմա-

բաններ Ջ. Գամախարիայի և Բ. Գոգիայի հետազոտությանն ու շեշտվում է, որ գրքի «հրատարակումն ուներ բացահայտ քարոզական բնույթ»²⁰:

Պատմաբան Գ. Չիճարիան առաջինն էր փորձել ամբողջականացնել XX դարի սկզբներին վերաբերվող Աբխազիայի պատմությունը: Նրա աշխատությունները հիմնված են զանազան աղբյուրների վրա²¹: Սակայն հեղինակն իր ուշադրությունը հիմնականում սևեռել էր այն խնդիրների վրա, որոնք դուրս էին գալիս «հեղափոխական շարժման» հետազոտության շրջանակներից²²: 1917-1921 թթ. ժամանակահատվածում նա հիմնականում հետազոտում է խորհրդային իշխանության համար պայքարը²³: Խորհրդային պատմաբանի աշխատություններում միանշանակ բացասական է գնահատվում Դեմոկրատական Վրաստանի «մենշևիկյան» կառավարության քաղաքականությունն Աբխազիայում, հետևապես Գ. Չիճարիայի հետազոտությունները կարելի է դասել «աբխազական» հայեցակարգն արտահայտող հեղինակների շարքին:

Հետխորհրդային շրջանում Աբխազիայում 1917-1921 թթ. տեղի ունեցած իրադարձությունները շարունակել էր ուսումնասիրել Ս. Լակոբան, որն արդի պատմագրության մեջ կարող է համարվել «աբխազական» հայեցակարգի հիմնադիրը²⁴: Նրա դիտարկումները աչքի են ընկնում տրամաբանությամբ, սակայն երբեմն գերծ չեն սուբյեկտիվ մոտեցումների դրսևորումներից: Ս. Լակոբան չի նկատում թուրքական վտանգի գործոնը 1918 թ. Աբխազիայի ժողովուրդների համար: Այդ դրվածքը բխում է պատմաբանի պնդումից, թե 1918 թ. թուրքական աջակցությամբ հռչակված հյուսիսկովկասյան լեռնականների հանրապետության կազմի մեջ մտել էր նաև Աբխազիան²⁵: Հետևապես Աբխազիայի հայտնվելը Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության սահմաններում նա դիտում է իբրև բռնագրավում²⁶: Այդ սկզբունքը դարձել է «աբխազական» հայեցակարգի հիմնաքարը²⁷: Բռնագրավման մասին տեսակետը զարգացվում է նաև իրավաբան Տ. Շամբայի և կենսաբան Ա. Նեպո-

¹⁴ Аспекты грузино-абхазского конфликта 10, с. 29.

¹⁵ Ментешавили А., Сургуладзе А., Только факты и документы.-“Литературная Грузия”, 1989, № 11.

¹⁶ Ментешавили А. Из истории взаимоотношений грузинского, абхазского и осетинского народов (1918-1921гг.), Тбилиси, 1990.

¹⁷ Ментешавили А., Грузино-абхазские отношения в первой четверти XX века.-“Разыскания по истории Абхазии/Грузии”. Тбилиси, 1999, с. 259-288:

¹⁸ Ментешавили А., Исторические предпосылки современного сепаратизма в Грузии. Тбилиси, 1998.

¹⁹ Гамахария Д., Гогия Б., Абхазия-историческая область Грузии (исторические документы, материалы, комментарии с древнейших времен до 30-х годов XX века). Тбилиси, 1997.

²⁰ Шнирельман В. А., Война памяти..., с. 414-417.

²¹ Дзидзария Г. А., Очерки истории Абхазии (1910-1921 гг.). Тбилиси, 1963. Նույնի՝ Формирование дореволюционной абхазской интеллигенции. Сухуми, 1979.

²² История Абхазской АССР (1917-1937 гг.), под. ред. Дзидзария Г. А. Сухуми, 1983.

²³ Дзидзария Г. А., Роль Советов и “Киараза” в истории революционной борьбы в Абхазии (1917-1921 гг.). Сухуми, 1971. Նույնի՝ Советская власть в Абхазии в 1918 году. Сухуми, 1972. Նույնի՝ “Киараз” (об Абхазской революционной крестьянской дружине 1917-1921 гг.). Сухуми, 1981.

²⁴ Лакоба С. З., Очерки политической истории Абхазии. Сухуми, 1990. Նույնի՝ Столетняя война Грузии против Абхазии. Гагра, 1993. Նույնի՝ Абхазия после двух империй (XIX-XXI вв.). Очерки (Славяно-Евразийские исследования, Вып. 2), (Центр славянских исследований при Университете Хоккайдо, Саппоро 2004). Москва, 2004.

²⁵ Лакоба С. З., К вопросу о Кавказской конфедерации. Абхазия и Грузия: вместе или врозь?.-“Грузины и абхазы: путь к примирению”, ред. Коппитерс Б. Москва, 1998, с.155-162.

²⁶ Лакоба С. З., Предисловие.-Материалы по истории Абхазии. Вып. 1. Сухуми, 1990, с. 3. Վրաց հետազոտողները հավանաբար են այս դրվածքին՝ ասելով. «Необходимо отметить, что сама постановка вопроса об “оккупации” несостоятельна ни с научной, ни с политической, ни с правовой точек зрения, ибо Абхазия — историческая область Грузии, ее неразрывная часть» (Гамахария Д., Гогия Б., Абхазия-историческая область Грузии, с. 75):

²⁷ Генерал Мазниев и оккупация Абхазии (§ 7). - История Абхазии, с. 296-299.

շինի համատեղ գրած աշխատության մեջ²⁸, որը նվիրված է Աբխազիայի պետական ինքնուրույնության իրավական հիմքերի հիմնավորման խնդրին: Գիտնականները՝ վերլուծությունը հիմնավորված դարձնելու համար, կատարում են որոշ պատմական ակնարկներ, այդ թվում 1917-1921 թթ. ժամանակաշրջանից²⁹: 1918թ. մայիսից մինչև 1921թ. փետրվարը Աբխազիան, ըստ նրանց, բացի բռնագրաված լինելուց, նաև դիտվել է իբրև Վրաստանի Հանրապետության կողմից «գավթված» երկիր, ինչը զարգացնում է աբխազական հայեցակարգը: Հիմնավորելով այդ գաղափարը՝ հեղինակները, միևնույն ժամանակ, որոշակի հակասությունների մեջ են հայտնվում, երբ հայտարարում են Աբխազիան և՛ լեռնականների անկախ հանրապետության դաշնային անդամ, և՛ միջազգային իրավունքի սուբյեկտ, իսկ նրա բնակչությունը՝ Ռուսաստանի քաղաքացիներ: Հեղինակները հիմնականում հղում են այն նյութերը, որոնք արդեն լուսարանվել են գրականության մեջ: Չլինելով մասնագետներ պատմության ասպարեզում՝ Տ. Շամբան և Ա. Նեպրոշինը բույլ են տալիս մի շարք վրիպումներ³⁰:

Պատմական ճշմարտության բացահայտման և ատենախոսության դրույթների հիմնավորման նպատակով մեր հետազոտության ընթացքում մեծ տեղ է հատկացվել արխիվային և պաշտոնական նյութերի վերլուծության ու մեկնաբանման: Այս տեսակետից բավականին արժեքավոր են Հայաստանի Ազգային Արխիվում (ՀԱԱ) պահվող ՀՀ կառավարության³¹, ՀՀ Արտաքին գործերի նախարարության³², Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության³³ փաստաթղթերն ու նյութերը, որոնք լույս են սփռում մասնավորապես Աբխազիայի և Սոչիի համաշխարհային համայնքի կացության վրա, ինչպես նաև Սուխումում ՀՀ հյուպատոսարանի բացման շարժառիթների և նրա գործունեության վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեման ընդգրկում է նաև ամբողջ վերահայտությանը վերաբերվող խնդիրներ, ապա առանձնակի տեղ է հատկացվել Վրաստանի Հայոց ազգային խորհուրդի նյութերին և փաստաթղթերին³⁴: Հետազոտության համար օգտակար է եղել Բաբվի Հայոց ազգային խորհրդի նյութերի ուսումնասիրությունը³⁵: Հետազոտության ամբողջականացման համար կարևոր փաստաթղթեր են հայտնաբերվել ՀԱԱ-ին կցված Նորագույն պատմության Կենտրոնական Պետական Արխիվի (ՆՊԿՊԱ)՝ Հայաստանի ԽՍՀ Արտաքին գործերի ժողկոմատի ֆոնդում³⁶ և այլն: Հետազոտությունը պահանջում էր իրագրել լինել ուսումնասիրվող շրջանին վերաբերվող և Վրաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՎԿՊՊԱ) գտնվող նյութերին: Ուսումնասիրության համար առանձնակի կարևոր են

²⁸Шамба Т. М., Непрошин А. Ю., Абхазия: Правовые основы государственности и суверенитета. Издание 2-е, переработанное. Москва, 2004.

²⁹Շամ Տ. Շամբայի և Ա. Նեպրոշինի՝ «Одна из узловых болевых точек в истории грузино-абхазских отношений — это период 1917-1921 годов» (նույն տեղում, էջ 79):

³⁰Այսպես, հակադրվելով պատմական փաստերին, գրքի հեղինակները գրում են, թե տեղի է ունեցել «изгнание в 1920 г. грузинских войск с территории Абхазии силами Добровольческой армии генерала А. И. Деникина» (նույն տեղում, էջ 117):

³¹ ՀԱԱ, ֆ 199, ց. 1:

³² ՀԱԱ, ֆ 200, ց. 1:

³³ ՀԱԱ, ֆ 276, ց. 1:

³⁴ ՀԱԱ, ֆ 441, ց. 1:

³⁵ ՀԱԱ, ֆ 223, ց. 1:

³⁶ ՀԱԱ (ՆՊԿՊԱ), ֆ 114, ց. 1, ց. 2:

Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կառավարության քարտուղարության³⁷, Հիմնադիր ժողովի³⁸ և Ներքին գործերի նախարարության³⁹ և այլ փաստաթղթերը, որոնք բացահայտում են Վրաստանի պետական հիմնարկների քաղաքականությունն Աբխազիայում և հարակից տարածաշրջանում: Պաշտոնական նյութերից կցանկանալիքը հիշատակել Վրաստանի կառավարության կողմից հրատարակված արտաքին քաղաքականությանը վերաբերվող փաստաթղթերի և նյութերի ժողովածուն⁴⁰:

Ատենախոսությունում մեծ տեղ է հատկացված մամուլին: Այս շարքի աղբյուրներում առանձնակիորեն կարևորվում են Վրաստանում լույս ընծայված հայերեն, վրացերեն և ռուսերեն թերթերը՝ «Աշխատատր», «Բանվորի ձայն», «Ժողովրդի ձայն», «Հորիզոն», «Մշակ», «Նոր աշխատատր», «Նոր խօսք», «Երտոծա», «თავისუფალი და ცხვირგება», «საქართველო», «კლეფ», «სახალხო საქმე», «მშობა», «Борьба», «Возрождение», «Грузия», «Закавказское слово», «Иверия экспресс», «Кавказ», «Кавказское слово», «Коммунист Грузии», «Молот», «Народное знамя», «Наше знамя», «Свободная Грузия», «Слово», «Социал-демократ», «Тифлисский листок», որոնց էջերում կան բավականաչափ վերլուծական և փաստագրական բնույթի նյութեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատանքն ունի գիտագործնական և պատմաճանաչողական նշանակություն: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել Վրաստանի նորագույն պատմությունը հետազոտողների համար: Ատենախոսության գործնական նշանակությունը, մեր տեսակետից, կայանում է նաև նրանում, որ հետազոտված հարցերի լուսարանումն աջակցելու է արդի պատմաբաններին և այլ հասարակագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին ավելի դյուրին ուսումնասիրել տարածաշրջանում գոյություն ունեցող և ազգամիջյան հարաբերությունների հետ փոխկապակցված հիմնահարցերը, հատկապես Աբխազիայի պարագայում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության հիմնական դրույթները լուսարանվել են հեղինակի պատմագիտական հոդվածներում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում: Ատենախոսությունը բննարկվել է և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Զրիստոնյա Արևելք» բաժնի կողմից:

II. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը և գործնական նշանակությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, տրված է խնդրո առարկա հարցի

³⁷ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 1, ց. 2:

³⁸ՎԿՊՊԱ, ֆ. 1833, ց. 1:

³⁹ՎԿՊՊԱ, ֆ. 1863, ց. 1:

⁴⁰Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Изд. «Правительства Грузинской республики». Тифлис, 1919.

ուսումնասիրվածության աստիճանը, օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Գլուխ առաջին՝ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԲԽԱՋԻԱՅՈՒՄ (ՓԵՏՐՎԱՐ 1917 թ. - ՓԵՏՐՎԱՐ 1919 թ.)», որը բաղկացած է հինգ ենթագլուխներից:

1.1 «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԲԽԱՋԻԱՅԻ ԻՆՏԵՆՍԻՎՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ ՄԻՆՉԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԱԲԽԱՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ» ենթագլխում ուսումնասիրվում են վրաց և արխազ բնակչության շահերը ներկայացնող կազմակերպությունների շփումները և նրանց միջև եղած տարաձայնությունների բովանդակությունը, որն ամբողջականացվել է սույն աշխատության մեջ:

Ռուսաստանի կայսրության անկումից հետո նրա սմբողջ տարածքում, այդ թվում՝ Այսրկովկասում, լուծման հրատապ հարց է դառնում ազգային խնդիրը: Վրացական ազգային շարժման արմատական մասը հանդես եկավ երկրամասի վրացաբնակ շրջաններին քաղաքական ինքնորոշման իրավունք տալու օգտին: 1917 թ. ապրիլի կեսին վրացական քաղաքական հոսանքները համաձայնության եկան ապագա Վրաստանի ենթադրյալ սահմանների շուրջ, նրա հնարավոր տարածքը բաժանելով «անվիճելի» և «վիճարկվող» շրջանների: Վերջիններիս ընդգրկումը պետք է որոշվեր տեղի բնակչության հանրաքվեի միջոցով: Այս առումով Աբխազիան դասվեց «վիճարկվող» շրջանների կարգում: Աբխազ գործիչները պահանջում էին Վրաստանից անջատ ազգային ինքնորոշում, քանի որ արխազները «վրացական ցեղ չեն և բացարձակապես չեն հասկանում վրացերեն լեզուն»⁴¹: 1917 թ. նոյեմբերի 8-ին գումարված արխազական ժողովրդի համագումարը ստեղծեց Աբխազական ժողովրդական խորհուրդ, որը, արտահայտելով համագումարի կամքը հանդես եկավ կազակների և Կովկասի լեռնականների Հարավ-Արևելյան Միությանն անդամակցելու օգտին⁴²: Վրացական քաղաքական շրջանակները բողոքում էին այս Միության կազմը Աբխազիայի հնարավոր ներգրավման առթիվ⁴³: Սակայն նրա կազմալուծման և Ռուսաստանի հարավում քաղաքացիական պատերազմի պատճառով Համախմբված լեռնականների կառավարության իշխանության տարածումը Աբխազիայի վրա այլևս իրական չէր: 1918 թ. փետրվարի 9-ին Աբխազական ժողովրդական խորհուրդը և Վրացական ազգային խորհուրդը համաձայնագիր կնքեցին, ուր ասված է, որ Աբխազիայի քաղաքական կառուցվածքի ապագա ձևը պետք է մշակվի այս միավորի հիմնադիր ժողովում՝ ելնելով ինքնորոշման սկզբունքից⁴⁴: Աբխազները ցանկանում էին հասնել քաղաքական ինքնորոշվածության, միաժամանակ ունենալով ապագա Վրաստանի հետ միայն բարիդրացիական հարաբերություններ՝ որպես հավասար հարևանի:

Աբխազ ժողովրդի ներսում սոցիալական հակասությունները թույլ էին արխազների սակավության և նրանց պատկանող հողի առատության հետևանքով: Ընդհակառակը՝ կար բախում արխազ կալվածատերերի և հողագուրկ մեզրել գյու-

⁴¹ По Кавказу: Абхазия. — “Борьба”, 21. 05. 1917.

⁴² Казаки и горцы.- “Молот”, 25. 10. 1917. Юго-восточный союз (текст договора).- “Молот”, 02. 02. 1918.

⁴³ Жоржолани Г., Лекишвили С., Тоидзе Л., Хостария-Броссе Э., Исторические и политико-правовые аспекты конфликта в Абхазии, Тбилиси, 1995, с. 20.

⁴⁴ Աբխազիայի ինքնավարության շուրջը. - «Աշխատանք», 27. 11. 1920:

ղացիների միջև: Օգտվելով հեղափոխությունից մեզրել գյուղացիները հրաժարվում էին մուծել հողավարձը: Ազգամիջյան հարաբերություններն ավելի սրվեցին, երբ տարածվեց հողի վերաբաշխման մասին սոցիալիստական քարոզչությունը: Այս ամենի պատճառով արխազ ազնվականությունը և մտավորականության մի մասն ընտրել էր հյուսիսկովկասյան լեռնականների հետ միության կողմնորոշումը, որոնք խոստանում էին չմիջամտել Աբխազիայի ներքին գործերին և հովանավորել փոքրաթիվ արխազ ժողովրդին: Հակառակ դրան մեզրելներն ընտրել էին վրացամետ ուղին, քանի որ այնտեղից ծավալվում էր հեղափոխական քարոզչությունը, որը խոստանում էր հող: Առաջացավ Թուրքիայից վտարանդի արխազ-մոտաջիրների հայրենադարձության ծրագիրը, որպես հակակշիռ մեզրելներին: Տարածվել էին լուրեր, թե նրանց վերաբնակեցման համար արխազներն անհրաժեշտ էին գտնում վտարել մեզրելներին Աբխազիայից: Լայն տարածում ուներ «Աբխազիան՝ արխազների համար» կարգախոսը⁴⁵: Մոտաջիրների վերադարձի գաղափարը թելադրում էր Թուրքիայի հետ կապ ունենալու անհրաժեշտությունը: Աբխազների թուրքամետությունն ամրապնդվում էր նաև կովկասյան լեռնականների միջև նույն տրամադրությունների հետևանքով⁴⁶, որոնք ավանդաբար տոգորված էին համախալանական քարոզչությամբ և սերտ կապ էին հաստատել Օսմանյան Թուրքիայում գտնվող մեծ հյուսիսկովկասյան համայնքի՝ «չերքեզների» հետ:

1917 թ. - 1918 թ. սկզբին վրացական քաղաքական շրջանակները ձգտում էին պահպանել Աբխազիան այսրկովկասյան աշխարհաքաղաքական տարածքի մեջ, քանզի ապագա Վրաստանի պետական կառուցվածքը դեռևս պարզ չէր: Վրացական ազգային խորհրդի պայքարն ընդդեմ Կովկասի համախմբված լեռնականների միության կողմից ծրագրավորվող պետության մեջ Աբխազիայի ընդգրկմանը, ի սկզբանե նպատակ ուներ զերծ պահել Սուխումի շրջանի մեզրելներին արխազների և նրանց դաշնակից լեռնականների հնարավոր ոտնձգություններից: Առաջարկելով արխազական կողմին, լեռնականների փոխարեն դաշինք կապել մեզրելների հետ վրացական գործիչները հույս էին փայփայում, որ դրա շնորհիվ երկրամասում ունենալու էին լուրջ ազդեցության լծակներ: Մինչև Վրաստանի կազմում հայտնվելը, Աբխազիայի կարգավիճակը մնում էր անորոշ, քանզի չհաջողվեց ստեղծել որևէ լիազոր մարմին, որը իրավասու կլիներ խոսել երկրամասի ամբողջ բազմազգ բնակչության անունից⁴⁷: Բոլշևիկների իշխանության հաստատումը Սուխումում խթանեց արխազ հասարակության ներսում նաև «վրացամետ» կողմնորոշում և ստիպեց ապավինել վրացական զինված ջոկատների օգնությանը: Այնուամենայնիվ մինչև խորհրդային կարգերի վերացումը՝ 1918 թ. մայիսի 17-ը⁴⁸, Աբխազիան համարվում էր Խորհրդային Ռուսաստանի մասը⁴⁹:

Աբխազները ձգտում էին ոչ թե բացարձակ անկախության, այլ փնտրում էին տարածաշրջանում յուրահատուկ «որմնախորշ», մտնելով դաշինքի մեջ. լեռնականների, Վրաստանի, «Սալիտակ շարժման» կամ Խորհրդային Ռուսաստանի հետ:

⁴⁵ “Երթոթծ», 17 մարտի 1918.

⁴⁶ Гагагова Л. С., Революция 1917 г. и этнополитическая ситуация на Кавказе.—История народов России в исследованиях и документах, Москва, 2004, с. 156.

⁴⁷ Территория горского штата.- “Молот”, 16. 12. 1917.

⁴⁸ Փարաջանեան Գ., Աբխազները դեպի Սուխում.- «Հորիզոն», 17. 05. 1918: Աբխազները բոլշևիկների դեմ.- «Հորիզոն», 21. 05. 1918:

⁴⁹ Авдеев Мих., Независимое Закавказье: территория. — “Кавказское слово”, 17. 04.1918.

1.2 «ՎՐԱՍՏԱՆԻ ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ԱՐԽԱԶԻԱ-ՅՈՒՄ ԵՎ ՎՐԱՏ-ԱՐԽԱԶԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ» ենթագլխում լուսարանվում են երկրամասում վրացական զինված ուժի ձեռքը կառավարական լծակների անցման պատճառները: Թիֆլիսում կնքված վրաց-արխազական դաշնագրերի մանրամասն բնութագրումը և վերլուծությունը:

1917 թ. բոլշևիկյան կառավարության իշխանության գալը և նրա կարգադրությանը կոմունիստական կարգախոսների իրականացումը քաղաքացիական պատերազմի կրթան դարձան Ռուսաստանում, ինչպես նաև՝ Այսրկովկասի առանձնացման պատճառ: Այնուհետև թուրքական զորքերի ներխուժումը հանգեցրեց Այսրկովկասի ինքնաբերաբար տրոհմանը՝ անտեսելով վիճելի տարածքների նկատմամբ ենթադրվող պայմանավորվածությունների և հանրաքվեների հանգամանքը: 1918 թ. մայիսի 26-ին հռչակված Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը չունեց միջազգայնորեն համաձայնեցված սահմաններ և վրացարևակ գավառներից բացի հավակնում էր նաև կազմալուծված Ռուսաստանի կայսրության մի շարք տարածքների, այդ թվում՝ Սև ծովի ափին գտնվող Սուխումի (Աբխազիա) և Սոչի-Գագրայի շրջաններին:

Մի կողմից բոլշևիկները, մյուս կողմից վրաց սոցիալ-դեմոկրատները փորձում էին հրահրել սոցիալական պայքար արխազ հասարակության ներքում: Դրա դիմաց սակավաթիվ արխազ մտավորականությունը պայքարում էր հանուն ազգային գաղափարների շուրջ արխազ ժողովրդի բոլոր խավերի միասնականություն⁵⁰: 1917-1918 թթ. Աբխազիայի պայմաններում սոցիալական հակասությունների սրումը ևս նպաստեց ազգամիջյան հարաբերությունների լարմանը: Հեղափոխական իրադարձությունները, որոնք դիտվում էին որպես հողի վերաբաշխում տեղի մեզրելների օգտին⁵¹, խթանեցին արխազ ունևոր խավի մի մասի թուրքամետ դիրքորոշումը: Նրանք, ապավինելով Կովկասի լեռնականների և Օսմանյան Թուրքիայի օգնությանը, հարց էին բարձրացնում երկրամասից ոչ արխազ ազգությունների հեռացման մասին, հույս ունենալով այդ միջոցով մեղմացնել սոցիալական խնդիրը⁵²:

Վրաստանի անկախության հռչակման պահին Աբխազիան կառավարվում էր վրաց Ազգային խորհրդին ենթակա ռազմական ուժի կողմից, հետևապես վրացական կառավարությունը փաստացի ձեռք բերեց լուրջ առաջնություն երկրամասի ապագա կարգավիճակի հարցում: Ընդունելով Գերմանիայի հովանավորությունը, վրացական կառավարությունը նրանից ստացավ Աբխազիայի նկատմամբ իրավունքի ճանաչում⁵³: 1918 թ. հունիսի 8-11-ին Թիֆլիսում ձեռք բերած պայմանավորվածությունների համաձայն Աբխազական ժողովրդական խորհուրդը մեկ ազգության հասարակաբարակական կազմակերպությունից պիտի վերակազմավորվեր երկրամասի գերագույն մարմնի, սակայն իրականում ունեցավ ներկայացուցչական ֆունկցիա, քեև ենթադրվում էր, որ այդ կարգավիճակը ժամանակավոր է:

1.3 «ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՆՎԱՏՄԱՄԲ: «ՄՈՒՀԱԶԻՐԱԿԱՆ» ԴԵՄԱՆՏԸ» ենթագլ-

⁵⁰ Абхазия. - "Слово", 04. 08. 1920.

⁵¹ "გრობა", 17 აპრილი 1918.

⁵² Արշալույս Գ., Թիֆլիսից - Հյուսիսային Կովկաս. - «Հորիզոն», 24 11. 04. 1918:

"საქართველო", 4 თებლის 1919.

⁵³ Авалов З., Независимости Грузии в международной политике 1918-1921 гг., Париж, 1924, с. 68-69.

խում ներկայացվում են Գերմանական և թուրքական գործոնների ազդեցությունը Աբխազիայի շուրջ եղած զարգացումների վրա: Օսմանյան Թուրքիայի դերը վրաց-արխազական հարաբերություններում, երկրամասում իր քաղաքական և ռազմական գերիշխանության հաստատմանը միտված քաղաքականությունը: Աբխազիայի նրկատմամբ թուրքական ուսնձգությունների ձայնորումը, որպես Վրաստանի կառավարության ճկուն գործելակերպի հետևանք: Թուրք-մուհաջիրական դեսանտը, նրա ջարհախման ժամանակ եղած իրադարձությունների լուսարանումը նոր փաստերի հիման վրա⁵⁴: Այդ դեպքերի ժամանակ արխազ բնակչության համար ստեղծված իրական դրության մասին վկայող աղբյուրների համակարգում և ամբողջականացում⁵⁵:

1.4 «ԱՐԽԱԶԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ» ենթագլխում ներկայացվում են Աբխազական ժողովրդական խորհրդի ներքում հակասությունների պատճառները, նրանց լարման հետևանքով այդ մարմնի գործունեության արգելումը: Նորովի են լուսարանվում Աբխազական ժողովրդական խորհրդի ցրման հետ կապված դեպքերը:

Վրաց-արխազական դաշնագրերի կնքումն ուներ պայմանական բնույթ, քանզի Վրաստան-Աբխազիա վերջնական հարաբերությունների մասին վճիռը պատկանում էր երկրամասի ենթադրվող Ազգային ժողովին: Վրաստանի կառավարությունն ընդդիմանում էր նրա գումարման, ցանկանալով ունենալ երկրամասում ընտրովի ներկայացուցչական մարմին, որն օժտված կլիներ ինքնակառավարման լիազորություններով⁵⁶: Ենթադրվում էր, որ այդպիսի մարմնի գոյությունը միանգամայն անվճար կլիներ Վրաստանի ապագա շահերի համար, միաժամանակ ի լուր աշխարհի կապացուցվեր Աբխազիայի ժողովրդի կամքն ապրել Վրաստանի սահմաններում: Աբխազիայի ենթադրյալ ընտրովի մարմնի լիազորությունների շուրջն առաջացած տարաձայնությունները հանգեցրին Աբխազական ժողովրդական խորհրդի լուծարման⁵⁷: Երկրամասում ժամանակավորապես հաստատվեց Վրաստանի կենտրոնական իշխանությունների անբաքույց կառավարումը:

1.5 «ԱՐԽԱԶԻԱՅՈՒՄ ՆՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ «ՄՊԻՏԱԿ ՇԱՐԺՄԱՆ» ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ԿՈՎԿԱՍՈՒՄ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԱՇՈՒՄՆ «ԱՐԽԱԶԱԿԱՆ ԽՆԴԻ» ՄԵՋ» ենթագլխում ներկայացվում են Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցի հետ կապված «Սպիտակ շարժման» ղեկավարների և Վրաստանի կառավարության միջև հակասությունների լուսարանումը: Կովկասում բրիտանական իրամանատարության այդ հարցում ներքաշվածության աստիճանը⁵⁸:

Գլուխ երկրորդ «ԱՐԽԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՅԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵՋ (ՄԱՐՏ 1919 թ. - ՓԵՏՐՎԱՐ 1921 թ.)», որը բաղկացած է երկու ենթագլուխներից:

⁵⁴ ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 27, ք. 27-29: Աղաբեգեան Խ., Վրաստանը և Աբխազիան. - «Մշակ», 28. 03. 1919:

⁵⁵ Տաճկական դեսանտ. - «Հորիզոն», 30. 06. 1918: "Борьба", 09.07.1918. "Кавказское слово", 05. 09. 1918.

⁵⁶ ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 28, ք. 22-22 շրջ:

⁵⁷ ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 37, ք. 64-69: Նույն տեղում, գ. 28, ք. 60: Աբխազիայում՝ Կառավարության հաղորդագրություն. - «Հորիզոն», 13. 10. 1918:

⁵⁸ Տե՛ս "Демократическое" правительство Грузии и английское командование. - "Красный Архив" (исторический журнал), том 21, 1927, с. 122-173.

2.1 «ԱԲԽԱԶԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ենթագլխում լուսաբանվում են ինքնավար կառավարման մեխանիզմը կարգավորող օրենսդրության բացակայության պարագայում Վրաստանի կառավարության կողմից Աբխազիայում ինքնավարության սկզբունքի վերահաստատումը⁵⁹ և այդ բայի հակասական հետևանքները: Աբխազիայի ժողովրդական խորհրդի գումարումը և երկրամասում ձևավորվող կառավարման համակարգի մեջ առաջացած հակասությունների պատճառները: Աբխազիայի ժողովրդական խորհրդում քաղաքական բևեռի կարծիքները ինքնավարության բնույթի վերաբերյալ և տարածայնությունների արմատները:

Բոլոր վայրիվերումները, որոնք տեղի ունեցան Աբխազիայի հիմնահարցի շուրջ, բերում էին խառնաշփոթի նրա կառավարման ասպարեզում: Այս երևույթն ուներ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Երկրամասը արխագական ազգային ինքնավարության վերածվելը դիմադրություն էր հանդիպում նրա բազմազգ լինելու պատճառով⁶⁰: Աբխազիայի ինքնավարության հայտարարական բնույթը պայմանավորված էր նաև վրաց քաղաքական շրջանակներում տարածված միտումով, թե երկրամասին իրական ինքնավարություն տրամադրումը կհանգեցնի դրա տարանջատման: Աբխազիայի ինքնավարության անքակտելիության մասին Վրաստանի կառավարության հավաստիացումները հեռու էին իրականությունից: 1919 թ. փետրվարին ընտրված Աբխազիայի ժողովրդական խորհրդը ենթադրվում էր որպես օրենսդիր մարմին, սակայն մինչև Աբխազիայի սահմանադրության հաստատումը նրա լիազորությունների շրջանը չէր որոշված: Այդ իսկ պատճառով նա ուներ ներկայացուցչական ֆունկցիա⁶¹: Աբխազիայի ժողովրդական խորհրդի և նրա կողմից ձևավորված տարածքային գործադիր իշխանության՝ Կոմիսարիատի լիազորությունները, ժամանակակիցների վկայությամբ, ձևական էին. իրական իշխանական լծակները գտնվում էին վրացական զինվորական հրամանատարության ձեռքում⁶²:

Սույն աշխատությունում մենք եկանք այն եզրակացության, որ կնքված 1918 թ. հունիսի 8-ին և 11-ին վրաց-աբխազական դաշնագրերը չունեցան որևէ գործնական նշանակություն Վրաստանի կազմում Աբխազիայի կարգավիճակի որոշման հարցում, հետևապես գործընթացը վերսկսվել էր միայն Վրաստանի Հիմնադիր ժողովի գումարումից հետո: 1919 թ. մարտ ամսից Աբխազիայի «ինքնավար» մարմինները դիտվում էին իբրև զենստվոյական⁶³, ինչը համեմատ 1918 թ. կնքված դաշնագրերի պահանջների դրանց կարգավիճակի զգալի նվազեցում էր: Հետզհետե երկրամասում գավառական զենստվոյների առաջացման հետևանքով տեղական վարչությունը ներություն էր զգում իրենց և կառավարության միջև ևս մի օղակի առկայության հետևանքով: Բանն այն էր, որ Վրաստանի պետական կառավարման տեսակը իր սոցիալիստական առաջնորդների կողմից մտածված էր որպես «ունիտար դեմոկրատական հանրապետություն»՝ ի տարբերություն «խորհրդային» կար-

գրի⁶⁴: Վրաստանում որպես տեղական կառավարման օղակ էր ընտրվել գավառական Ձեմստվոն և ենթադրյալ սահմանադրությունն օժտում էր դրան ինքնավար լիազորություններով⁶⁵: Հետևապես յուրաքանչյուր գավառը վերածվում էր տեղական (վարչատարածքային) ինքնավարության: «Ինքնավար» Աբխազիայի ժողովրդական խորհրդի և Կոմիսարիատի գոյությունը խլում էր Աբխազիայի գավառական զենստվոյներից լիազորությունների մի մասը, որի հետևանքով դրանց կարգավիճակը զգալիորեն հավասար չէր Վրաստանի այլ գավառների հետ: Առաջացած անհավասարաչափության հետ համաձայն չէին ոչ կենտրոնում, ոչ էլ տեղերում՝ առավելապես մեզրեյաբնակ Սամուրզականի գավառում⁶⁶: Աբխազիայի զենստվոյների իրավունքներն ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ էր օժտել երկրամասը ղեկավարող «ինքնավար» հիմնարկները՝ պետական կարգավիճակով, ինչը պահանջում էր վերածել Աբխազիայի ժողովրդական խորհրդը՝ օրենսդիր, իսկ Կոմիսարիատը պետական կառավարման մարմին: Հետևապես Աբխազիայի ինքնավարության գաղափարը ենթադրվող վարչականի փոխարեն կատարող քաղաքական (պետական) բնույթ: Դրա հետ համաձայն չէին վրաց պետական և կուսակցական շրջանակներում, քանի որ համարում էին, թե դա կվնասի Վրաստանի ինքնիշխանությանը: Աբխազիայի «ինքնավար» մարմինները հայտնվել էին միանգամայն ավելորդ օղակի դերում: Այս կարևոր հանգամանքը, որն ուներ օբյեկտիվ հիմք, չէին նկատել և հետևապես չէին լուսաբանել ո՛չ վրաց, ո՛չ աբխազ հետազոտողները:

2.2 «ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻԾԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՉԱԿԱՆ ՍԱՐՄՆԻ ԲԱՆԱԿԱՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ» ենթագլխում ներկայացվում են Աբխազիայի անորոշ կարգավիճակի հետևանքով առաջացած խնդիրների և հակասությունների հարթահարման համար ընթացող բանակցությունների լուսաբանումը:

Համընդհանուր սկզբունքով ընտրված Աբխազիայի ժողովրդական խորհուրդը 1919 թ. մարտի 20-ին ընդունեց «Աբխազիայի ինքնավարության մասին Ակտը»⁶⁷, երկրամասի վերջնական իրավական վիճակը պետք է որոշեր նրա սահմանադրությունը: Աբխազիայի սոցիալ-դեմոկրատները, որոնք Աբխազիայի ժողովրդական խորհրդում մեծամասնություն էին⁶⁸, հանդես եկան մարզային ինքնակառավարման, իսկ ընդդիմությունը քաղաքական լայն ինքնավարության պահանջով⁶⁹: Աբխազ ազգային մտավորականությունն առաջ էր քաշել Աբխազիայի և Վրաստանի պետական հավասարության գաղափարը, որի դեպքում նրանց հարաբերությունները պետք է լինեին համադաշնային: Սահմանադրության մշակման ընթացքում պարզվել էր, որ աբխազական ընդդիմության նպատակն է «ստեղծել Վրաստանի հետ ժամանակավոր դաշինք, որպեսզի հետագայում՝ հարմար պահին, կարողանային խզել կապը նրա հետ և շրջել Աբխազիան դեպի այլ քաղաքական կողմնորոշում»⁷⁰: Ըստ վրաց պատմաբանների, «կառավարությունը ... իրագեղ լինելով անջատողականների նպատակների մասին, գրավել էր զգուշավոր դիրք և ամեն

⁵⁹Местная жизнь: автономия Абхазии.— “Грузия”, 21. 03. 1919. Хроника: автономия Абхазии.—“Народное знамя”, 21. 03. 1919. Грузия и Абхазия: телеграмма Учредительного собрания Абхазскому народному совету в Сухум. — “Кавказское слово”, 26. 03. 1919.

⁶⁰ Абхазский вопрос.— “Кавказское слово”, 25. 07. 1919.

⁶¹ Н. В. Рамишвили в Народном Совете Абхазии. — “Борьба”, 14. 02. 1920.

⁶²Тарнава М., Друзья и враги демократии Абхазии. — “Социал-демократ”, 20. 10. 1919.

⁶³ Земская и городская жизнь. — “Борьба”, 28. 12. 1919.

⁶⁴Վարչապետ Ն. Ժողովանիայի ճառը Սահմանադիր ժողովում. — «Աշխատար», 11. 12. 1920:

⁶⁵ Доклад Н. Н. Жордания. — “Борьба”, 17. 12. 1919.

⁶⁶ Земская жизнь. — “Борьба”, 26. 06. 1919.

⁶⁷ Տե՛ս «Աշխատար», 27. 11. 1920:

⁶⁸В народном совете Абхазии. — “Кавказское слово”, 26. 03. 1919.

⁶⁹ Տե՛ս “Социал-демократ”, 06. 10. 1919.

⁷⁰ “Слово”, 05. 08. 1920.

կերպ հետաձգում էր Աբխազիայի սահմանադրության ընդունումը»⁷¹: Երկրամասի սահմանադրության նախագիծը քննարկվել է 1919 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. նոյեմբեր Թիֆլիսում՝ արխազական պատվիրակությունների մասնակցությամբ: Վրացական պետական և քաղաքական շրջանակները ձախողում էին համատեղ աշխատանքը այն պատրվակով, թե Աբխազիայի սահմանադրության մշակումը համապետականից առաջ հանդիսանում է վաղաժամ քայլ: Ըստ նրանց երկրամասի վերջնական իրավական վիճակը պետք է որոշեր Վրաստանի սահմանադրությունը և, որպես վերջինիս գումարելին՝ «հնքնավար Աբխազիայի կանոնակարգը»:

«Չկա Աբխազիա և՛ որպես երկրամաս, և՛ որպես Վրաստանի դեմոկրատական հանրապետության ինքնավար միավոր: Աբխազիայի ինքնավարությունը, որպես իրողություն, դեռևս գոյություն չունի և պետք է ստեղծվի»⁷², - արձանագրում էր Թիֆլիսի մամուլը: Աբխազիայի ժողովրդական խորհուրդի լիազոր պատվիրակության կարծիքով, որը 1920 թ. նոյեմբերի 19-ին Թիֆլիսում ստորագրել էր Վրաստանի կառավարության անունով ուղարկված հայտարարություն, այդ պահին Վրաստանի և Աբխազիայի հարաբերությունները օրինական չճանկերպվեցին, հետևապես, իրավաբանորեն պարտադիր չէին կողմերի համար⁷³:

1921 թ. փետրվարին Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի ներխուժման պայմաններում Վրաստանի Հիմնադիր ժողովը, հավանություն տվեց «Ինքնավար Աբխազիայի կառավարման մասին ժամանակավոր կանոնակարգին»⁷⁴, որը պետք է գործեր մինչև Վրաստանի սահմանադրության վերջնական վավերացումը: Ե՛վ վրաց, և՛ արխազ պատմաբանները միասնական են այն հարցում, որ ուշացած այս որոշումը այլևս ոչ մի նշանակություն չուներ և, հետևապես, չէր կարող իրական ուժ ունենալ:

Գլուխ երրորդը՝ «ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ (1918-1921 թթ.)», որը բաղկացած է յոթ ենթագլուխներից:

3.1 «ՍՈՒԽՈՒՄԻ ԾՐՋԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԻՃԱԿԸ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ» ենթագլխում լուսաբանվում են հայ-արխազական հարաբերությունները Այսրկովկասի կազմալուծման և նոր պետական միավորների առաջացման փուլում: Ռուսական կայսրության տապալումից հետո արխազական ազգային շարժման մի շարք գործիչներ առաջ քաշեցին Թուրքիայից վտարանդի արխազ-մուխաջիրների հայրենադարձության գաղափարը: Ըստ նրանց ոչ արխազ բնակչությունը պիտի հեռանար երկրամասից⁷⁵: Թուրքամետ արխազները ջանում էին թուրքերի միջոցով տեղահան անել հայերին⁷⁶: Զանգի Օսմանյան Թուրքիան ուներ նվաճողական ծրագրեր Կովկասում, մասնավորապես Աբխազիայում, ապա վերջինիս հայ համայնքը 1918 թ. պատրաստ էր օժանդակ լինել ցանկացած ուժին, որը դեմ կառնի այդ վտանգին⁷⁷: Բուլշևիկների իշխանության գոյության պարագայում հայերը կա-

պում էին իրենց հույսերը նրանց հեռ⁷⁸: Երկրամասում բուլշևիկների պարտվելուց հետո այդպիսի ուժ հանդիսացավ Վրաստանի կառավարությունը, որին էլ հաջողվեց կանխել թուրքական ներխուժումը: Համշենահայ համայնքը դեմ չէր վրացական իշխանության հաստատմանը երկրամասում, հատկապես թուրքական վտանգից խուսափելու նպատակով⁷⁹:

3.2 «ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՉԻ -ԳԱԳՐԱՅԻ ԾՐՋԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ» ենթագլխում լուսաբանվում են տարածքում հայ-վրացական, հայ-արխազական և հայ-ռուսական հարաբերությունների խնդիրները:

Վրաստանի կազմում Աբխազիայի ընդգրկումն ինքնաբերաբար բերեց նաև Սոչի-Գագրայի շրջանի միավորմանը: Աբխազիայի, ինչպես նաև Սոչի-Գագրայի շրջանի հայ համայնքի մեծ մասը տրամադրված չէր ներքաշվելու Ռուսաստանում բռնկված քաղաքացիական պատերազմի մեջ, ինչպես նաև աջակցություն ցուցաբերել Վրաստանի կառավարությանը բուլշևիկների դեմ պայքարում⁸⁰: Հետևապես արտաքուստ դա պատճառ հանդիսացավ բուլշևիկյան տրամադրություններ վերագրելու տեղի հայերին⁸¹, որից օգտվելով վրաց զինվորականությունը հալածում էր հայ ազգաբնակչությունը⁸²: Հայերի ահաբեկումը վրաց զինվորականության ձեռքով պայմանավորված էր ոչ միայն հակահայկական տրամադրությունների տարերային արտահայտումով, այլ նաև Վրաստանի կենտրոնական իշխանությունների արտաքուստ քաղաքականությանը հարաբերված էր անում այդ տեսակ երևույթները՝ նպատակ ունենալով դուրս մղված հայ երկրագործների փոխարեն վերաբնակեցնել սակավահող վրաց գյուղացիներին և այդպիսով մեղմացնել սոցիալական հակասությունները վրաց հասարակության ներսում: Շրջանի հայ բնակչության նկատմամբ առանձին վրաց պաշտոնյաների և զինվորականների վարքագիծը բերեց հայ-վրացական հարաբերությունների սրմանը: Այդ պարագայում նրանց խորացմանն աջակցեց տարածքային վեճը «Սպիտակ շարժման» ղեկավարների և վրաց կառավարության միջև: Անկարգապահ վրաց զինվորականության սառըիչ պահվածքը պատճառ դարձավ նրա դեմ Սոչի-Գագրայի հայության մի մասի ելույթի համար⁸³: Անկարգություններ անող վրաց զինվորականների դեմ համշենահայ բնակչության մասնակի ելույթը «սպիտակները» օգտագործեցին Սոչի-Գագրայի շրջանի գրավման համար⁸⁴: Վրացական կողմն այս անգամ մեղադրեց տեղի հայ համայնքը «Սպիտակ շարժման» աջակցելու մեջ⁸⁵:

⁷⁸Տե՛ս Байков Б., Воспоминания о революции в Закавказье (1917-1920гг.) - Архив Русской Революции изданный И. В. Гессеном, т. IX, Берлин, 1923, с. 116

⁷⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, ք. 61:

⁸⁰ ՀՅԳ-ի Վրաստանի 2-րդ ռայոնական ժողով. - «Աշխատատր», 01. 04. 1919:

⁸¹ Սոչիի վերջին անցքերը. - «Աշխատատր», 23. 05. 1919:

⁸² ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, ք. 8, 11:

⁸³ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, ք. 3, 4: Նույն տեղում՝ ֆ. 441, ց. 1, գ. 56, ք. 2-3: ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, ք. 22-27: Սոչիի շրջանի Հայոց ազգային խորհրդի դիմումը. - «Աշխատատր», 25. 03. 1919:

⁸⁴ "Меморандум" Добровольческой армии английскому командованию по поводу взаимоотношений с Грузией. - "Кавказское слово", 05. 04. 1919. События в Сочинском округе. - "Закавказское слово", 09. 02. 1919. К событиям в Сочи. - "Народное знамя", 09. 02. 1919. Деникин А. И., Очерки русской смуты. Книга третья - Вооруженные силы Юга России, т. 4, т. 5., Москва, 2005, с. 225.

⁸⁵ ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, ք. 14: Սոչիի շրջանի հայ աշխատատրության վիճակը. - «Աշխատատր», 12. 06. 1919:

⁷¹ Гамахария Д., Гогия Б., Абхазия-историческая область Грузии, с. 112.

⁷² Абхазия. - "Слово", 20. 08. 1920.

⁷³ Աբխազիայի ժողովրդական խորհրդի հուշագիրը Վրաստանի կառավարության. - «Աշխատատր», 26. 11. 1920:

⁷⁴ ՎԿՊՊԱ, ֆ. 1833, ց. 1, գ. 863, ք. 93-95:

⁷⁵ Տե՛ս Чочуа А.М., Собрание сочинений, т. 3, Сухуми, 1976, с. 83.

⁷⁶ Հայերի դրուսիներ Սուխումի շրջանում. - «Հորիզոն», 26. 05. 1918:

⁷⁷ Սուխումի ապստամբության արթիվ. - «Բանվորի ձայն», 26. 10. 1919:

ներառալաբական կյանքում: Վրաց գործիչները համարում էին, որ հայերն արդեն մշակութային օջախ ունեն Հայաստանի Հանրապետությունում և որ հարկ չկա համանման պայմաններ ստեղծել Վրաստանի հայ համայնքի համար¹⁰⁰:

3.6 «ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐՈՑԻ ԽՆԴԻՐԸ ԱԲԽԱՋԻԱՅՈՒՄ» ենթագլխում լուսաբանվում են հարցեր, որոնք սերտորեն կապված էին մշակութային ինքնավարության խնդրի հետ: Այդ խնդրի հիմնաքարն էր համարվում Վրաստանում հայկական ազգային դպրոցի ստեղծման պահանջը: Նրա շուրջ Վրաստանի և Սովետների Հայոց ազգային խորհուրդները բանակցություններ էին վարում Վրաստանի իշխանությունների հետ¹⁰¹:

Ավանդաբար հայկական դպրոցը գոյատևում էր հիմնականում ունևոր խավերի բարեգործության շնորհիվ: Ենթադրվում էր, որ կենտրոնացված (ապատարածքային) մշակութային ինքնավարության դեպքում հայ բնակչության վրա կտարածվի պարտադիր տուրք: Վրաց սոցիալիստական կառավարության քաղաքականության շնորհիվ Վրաստանում հայ ունևոր խավը սնանկացել էր¹⁰²: Հայոց ազգային խորհուրդների տնօրինման տակ գտնվող հայկական ժողովրդական դպրոցները լուրջ ֆինանսական ճգնաժամ էին ապրում, որի լուծման համար Վրաստանի լուսավորության նախարարությունն առաջարկում էր իրեն հանձնել հայկական կրթական օջախների վերահսկումը¹⁰³: Հայերը, որ կազմում էին Վրաստանի բնակչության զգալի մասը հետզհետե զրկվում էին ինքնուրույն կրթամշակութային կյանքի կազմակերպման հնարավորությունից, մի բան, որն ունեին ցարական տիրապետության ժամանակաշրջանում¹⁰⁴: Հայկական հասարակական շրջանակներն այդ ձգտումը դիտում էին որպես նախադեպ Վրաստանի հայկական համայնքի միասնականության թուլացման, ապա ազգաձուլման համար:

3.7 «ԱԲԽԱՋԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՈՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՍՏԱՅՆՔԻ ՀԵՏԱԳԱ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԱՐՅԸ» ենթագլխում լուսաբանվում են Աբխազիայի վրաց իշխանությունների հետ համշենահայ բնակչության հարաբերությունները:

Հողային բարեփոխման իրականացման կապակցությամբ կատարվում էր Վրաստանի քաղաքացիություն ունեցող գյուղացիներին խոշոր հողատերերից բռնագրավված հողի վաճառք¹⁰⁵: Տեղի հայերի համար տարիներ շարունակ կապալավարձի հիմունքով մշակվող հողը սեփականացնելու իրական հնարավորություն էր ստեղծվել: Սովետների Հայոց ազգային խորհրդի ղեկավարությունը կողմնակից էր ամրացնել հայությունն Աբխազիայում: ՀՅԴ-ի տեղի անդամները դիտում էին Աբխազիան իբրև ժամանակավոր բնակավայր և միացյալ Հայաստանի գաղափարի իրականացման դեպքում կողմ էին արտահայտվում հայրենադարձությանը: Սու-

¹⁰⁰ Տե՛ս «Слово», 23. 06. 1920.

¹⁰¹ Գանակցականները և Սովետների Հայոց ազգային խորհուրդը. - «Բանվորի ձայն», 03. 10. 1920: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի նիստը. - «Նոր աշխատատը», 01. 10. 1920: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի նիստը. - «Աշխատատը», 09. 10. 1920:

¹⁰² Խառնիսեան Ա.Լ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրոս, 1968, էջ 225-226:

¹⁰³ Վրաստանի Հայոց ազգային խորհրդի նիստը. - «Նոր աշխատատը», 30. 09. 1920:

¹⁰⁴ К вопросу о правах национальных меньшинств. - «Слово», 19. 06. 1920.

¹⁰⁵ Уратадзе Г. И., Образование и консолидация Грузинской Демократической Республики. - Исследования и материалы, серия 1, выпуск 29. Мюнхен: "Институт по изучению истории и культуры СССР", 1956, с. 11, 93.

խումի շրջանում հայության իրավունքները պաշտպանելու նպատակով բացված Հայաստանի Հանրապետության հյուպատոսարանը, նախապատրաստական աշխատանքներ էր իրականացնում հայրենադարձության համար, ինչը սուր բախման բերեց հյուպատոսի և Սովետների Հայոց ազգային խորհրդի անդամների միջև¹⁰⁶:

Վերջաբանում ամփոփվում են ուսումնասիրության արդյունքները, դրա գործնական նշանակությունը և ներկայացվում են ատենախոսության հիմնական եզրահանգումները:

1. 1917-1918 թթ. Աբխազիայի կարգավիճակը մնում էր անորոշ, քանզի չհաջողվեց ստեղծել որևէ լիազոր մարմին, որը իրավասու կլիներ խոսելու երկրամասի ամբողջ բազմազգ բնակչության անունից:
2. Աբխազները ցանկանում էին հասնել քաղաքական ինքնուրույնության, միաժամանակ ունենալով Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ՝ որպես հավասար հարևանի:
3. Աբխազ ժողովրդի ներկայացուցիչների մասնակցությունը Հյուսիսկովկասյան լեռնական ժողովուրդների միությունում չէր նշանակում այդ կառույցի մեջ Աբխազիայի ներգրավում:
4. Բազմազգ Աբխազիայի պայմաններում սոցիալական հակասությունների սրումը ևս նպաստեց ազգամիջյան հարաբերությունների լարմանը:
5. Վրաստանի տիրապետության հաստատմանն Աբխազիայում նպաստեցին բուլղարների կողմից հրահրվող քաղաքացիական պատերազմը, թուրքական վտանգը և արխազ ազգայնական քեփ ոտնձգությունները երկրամասի ոչ արխազ տարրի իրավունքների նկատմամբ:
6. Համշենահայ համայնքը դեմ չէր վրացական իշխանության հաստատմանը Սովետների շրջանում, հատկապես թուրքական վտանգից խուսափելու նպատակով:
7. 1918 թ. հունիսի 8-ի և 11-ի վրաց-աբխազական դաշնագրերը չունեցան որևէ գործնական նշանակություն Վրաստանի կազմում Աբխազիայի կարգավիճակի որոշման հարցում:
8. Ըստ վրաց պետական և քաղաքական շրջանակների Աբխազիայի վերջնական իրավական կարգավիճակը պետք է որոշեր Վրաստանի սահմանադրությունը:
9. Վրացական ազգային պետության ստեղծման նպատակին զոհաբերվում էին Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների շահերը:
10. Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցը, իր լուծումը չգտնելով Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության անկման հետևանքով, օրակարգի մեջ էր մնում նաև խորհրդային իշխանության հաստատումից հետո:

¹⁰⁶ Վ[ահան] Ռ[շումի], Սովետների շրջանի Հայոց ազգային խորհրդի հրաժարականի առթիվ. - «Բանվորի ձայն», 28. 03. 1920:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1) Արխագիայի կարգավիճակի ձևավորումը խորհրդային պետականության պայմաններում (1921-1931 թթ.). - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Եր., 2004, էջ 188-203:
- 2) Համընդհանրային զորամասը Կամավորական բանակի շարքերում 1919-1920 թթ. - Մերձավոր Արևելք II, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Եր., 2005, էջ 122-126:
- 3) Քաղաքական իրադրությունը և համընդհանրային կացությունն Արխագիայում 1918-1920 թթ. - Պատմա-բանասիրական հանդես, 2005, N 1, էջ 125-140:
- 4) Վրաստանի կառավարությունը և Սոչիի շրջանի համընդհանր համայնքը (1918-1920 թթ.). - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Եր., 2005, էջ 163-180:
- 5) Հայկական դպրոցները Վրաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ. - Պատմա-բանասիրական հանդես, 2006, N 1, էջ 181-200:
- 6) Համընդհանր համայնքը որպես ռազմաքաղաքական գործոն Սոչի-Գագրա տարածաշրջանում 1919 թ. - Մերձավոր Արևելք III, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Եր., 2006, էջ 87-94:
- 7) Համընդհանր համայնքը Վրաստանում 1918-1920 թթ. - Հայկազեան Հայագիտական Հանդես, հատոր ԻԶ, Պէյրուք, 2006, էջ 157-193:
- 8) Արխագիայի կարգավիճակի հարցը Վրաստանի Հանրապետության վարչական համակարգի մեջ (մարտ 1919 թ. - փետրվար 1921 թ.). - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXV, Եր., 2006, էջ 116-133:

МАИЛЯН БЕНИАМИН ВИКТОРОВИЧ
ПРОБЛЕМА СТАТУСА АБХАЗИИ 1917-1921 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07. 00. 02 "Всемирная история".

Защита диссертации состоится 22 февраля 2007 г., в 14⁰⁰ часов, по адресу 375019, г. Ереван, просп. Маршала Баграмяна 24г, на специализированном совете 006 при Институте востоковедения НАН РА.

РЕЗЮМЕ

Основной задачей представленной диссертации является изучение вопросов относящихся к проблеме статуса Абхазии, но оставшихся вне поля зрения грузинских и абхазских исследователей, а также грузино-абхазских, армяно-абхазских и частично армяно-грузинских отношений в 1917-1921 гг.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и первоисточников. Во Введении обосновывается актуальность и важность темы, формулируются цели и задачи исследования, разъясняются методологические основы работы, описывается структура диссертации и ее практическое значение.

В первой главе диссертации (Политическое положение в Абхазии (февраль 1917 г. — февраль 1919 г.) представлены исторические предпосылки образования Демократической Республики Грузия и ее взаимоотношения с народами Абхазии, желавших самоопределиваться. До присоединения к Республике Грузия статус Абхазии оставался неопределенным, так как не было соответствующего выборного органа который мог бы выразить волю народов Абхазии. Участие представителей абхазского народа в Союзе объединенных горцев Кавказа не привело к включению Абхазии в состав Горской (Северокавказской) республики. Гражданская война и угроза турецкой агрессии способствовали распространению власти грузинского правительства на территорию Абхазии и соседнего Сочинского округа. Как до, так и после этого события вопрос самоопределения абхазского народа оставался открытым. Заключение грузино-абхазских договоров в 1918 г. не имело практических последствий в определении статуса Абхазии.

Вторая глава (Вопрос статуса Абхазии в административной системе Республики Грузия (март 1919 г. — февраль 1921 г.) посвящена исследованию переговоров центральных властей Грузии и выборных представителей Абхазии по вопросу предполагаемого статуса Абхазии и дискуссиям, которые развернулись в среде грузинской и абхазской общественности. В условиях отсутствия механизма правового регулирования отношений между Грузией и Абхазией, формальное подтверждение грузинским правительством принципа автономии Абхазии привело к противоречивым результатам. Декларативный характер "автономии" Абхазии возник из-за опасения, что предоставление реальной автономии приведет к отделению Абхазии от Грузии. По твердому мнению грузинских политических кругов окончательный статус Абхазии должна была определить не ее конституция, а Грузии.

В третьей главе (Положение Армянской общины Абхазии (1918-1921гг.) впервые в современной историографии диссертант обращается к материалам освещающим положение армян в контексте межнациональных отношений в крае. Дается характеристика деятельности армянских национальных советов во взаимоотношениях с грузинскими властями. Для обеспечения интересов армянского населения Абхазии в Сухуме было открыто консульство Республики Армения, которое занималось решением проблемы гражданства местных армян. Правительство Армении намеревалось осуществить репатриацию армян Абхазии.

В заключении диссертации подводятся выводы исследования.

Основные положения диссертации опубликованы в местной и зарубежной печати.

MAILYAN BENIAMIN VIKTORI
THE PROBLEM OF THE ABKHAZIA'S STATUS 1917-1921

Б. В. Мей